

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ԲԱՅ ՄՐՅՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի  
2023 թվականի հուլիսի 13-ի N 2 որոշմամբ

Ընթացակարգի ծածկագիրը՝ **ՃԴ-ԲՄԽԾՁԲ-2023/02**

Պատվիրատուն՝ «**Ճանապարհային դեպարտամենտ**» հիմնադրամը, որը գտնվում է **ք.Երևան, Հանրապետության Հրապարակ, Կառավարական տուն 3** հասցեում, հայտարարում է բաց մրցույթ, որն իրականացվում է մեկ փուլով:

Սույն ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել **Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր-Ծրագիր 4, Սիսիան-Քաջարան հատվածի կառուցման նպատակով տարաբնակեցման ծրագրի իրականացման խորհրդարկական ծառայությունների** մատուցման պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր):

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի սույն ընթացակարգին մասնակցելու հավասար իրավունք:

Սույն ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեցող անձանց, ինչպես նաև մասնակիցներին ներկայացվող պայմանները սահմանված են սույն ընթացակարգի հրավերով:

Ընտրված մասնակիցը որոշվում է ոչ գնային պայմաններով բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Սույն ընթացակարգի նկատմամբ կիրառվում են Առևտրի համաշխարհային կազմակերպության պետական գնումների համաձայնագրի դրույթները եթե գնման գինը գերազանցում է Առևտրի համաշխարհային կազմակերպության պետական գնումների համաձայնագրով սահմանված շեմերը:

Էլեկտրոնային ձևով հրավեր տրամադրելու պահանջի դեպքում պատվիրատուն անվճար ապահովում է հրավերի՝ էլեկտրոնային ձևով տրամադրումը դիմումը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում:

Մրցույթի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել **ք.Երևան, Հանրապետության Հրապարակ, Կառավարական տուն 3** հասցեով, փաստաթղթային ձևով մինչև սույն հայտարարության հրապարակման օրվանից հաշված **15-րդ** օրվա ժամը **16:00-ը**: Հայտերը, հայերենից բացի, կարող են ներկայացվել նաև անգլերեն կամ ռուսերեն:

Հայտերի բացումը տեղի կունենա **ք.Երևան, Հանրապետության Հրապարակ, Կառավարական տուն 3** հասցեում, **2023 թվականի հուլիսի 28-ին** ժամը **16:00-ին**:

Սույն ընթացակարգի վերաբերյալ բողոքարկումն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքով և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ **Հեղինե Բաբաջանյանին**:

Հեռախոս՝ **010 54 21 76**

Էլ. Փոստ՝ **procurement@armroad.am**

Պատվիրատու՝ «**Ճանապարհային դեպարտամենտ**» հիմնադրամ